ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանի՝ 2023 թվականի ապրիլի 25-ից 26-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաք գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Նունե Պետրոսյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետը՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաք 2023 թվականի ապրիլի 25-ից 26-ը:

3. Հրավիրող կողմը՝ Տարածական և քաղաքաշինական զարգացման գործակալություն (SUDA, այսուհետ՝ «ՍՈՒԴԱ») (Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՍՈՒԴԱ-ի կողմից կազմակերպվող սույն համաժողովի նպատակն էր՝ համախմբել տեղական և լավագույն միջազգային փորձը և պրակտիկան, առաջադեմ մոտեցումները և դրանց ազդեցությունը տարածական պլանավորման և կառավարման վրա՝ նպատակ ունենալով վարել քննարկումներ տեխնիկական առաջադրանքի (TOR) պայմանների ձևավորման շուրջ՝ Ազգային տարածական զարգացման պլանի մշակման համատեքստում:

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ - ՎՐԱՍՏԱՆ 2023» խորագրով համաժողովը 2023 թվականի ապրիլի 25-ին կայացավ Թբիլիսիում, Վրաստան, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻ հովանու ներքո, որն անց է կացվում ամեն տարի՝ տարածական պլանավորման և կառավարման ոլորտում քաղաքականություն մշակելու և հիմնական ուղղությունները նախանշելու նպատակով:

«ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ - ՎՐԱՍՏԱՆ 2023» խորագրով համաժողովը տեղական և հրավիրված միջազգային փորձագետների համար ապահովեց կարիքների գնահատման, կարծիքների և փորձի փոխանակման միջազգային հարթակ՝ տարածակն պլանավորման և կառավարման հարցերի շրջանակում: Համաժողովի առանցքային հարցերից են հանդիսացել հետխորհրդային երկրներում տարածական պլանավորման առանձնահատկությունները, կայուն զարգացման մարտահրավերները, բնակչության զարգացման և տեղաբաշխման միտումները և դրանց տեղաբաշխման հավասարակշռված համակարգի ձևավորման ուղիները՝ շրջակա միջավայրում կլիմայի փոփոխությունների ազդեցության մեղմման ու կանխարգելման հաշվառմամբ:

5. Քննարկված թեմաները/հարցերը՝

Համաժողովի ներկայացուցիչներին ներկայացվեց տեղեկատվություն ներքոնշյալի վերաբերյալ.

- «Վրաստանի տարածքային զարգացման երկարատև պերիպետիաները ԽՍՀՄ-ից մինչև այսօր»
- Գերմանիայում և Հունգարիայում տարածական զարգացման և պլանավորման որոշ ասպեկտներ
- Վրացական փորձ - «Ախմետ քաղաքապետարանի և Տուշեի տարածական պլանավորում»

Մասնակիցներին ներկայացվեցին նաև որոշ քաղաքաշինական բարելավման ծրագրեր, հիմնված ներկայացվող տարածաշրջանների ռեսուրսների՝ որպես աճի խթան տարածքների համաչափ զարգացման գործընթացում ծառայելու հնարավորությունները, ինչպես օրինակ. հեռանկարային զարգացում Սագուրամոյում, Ծերովանի, Մուխրանի հովիտ, Ժինվալի և ջրամբար, Կոբի - Քվեշե նախագիծ (թունելի հարավային պորտալ) :

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի ունեցան քննարկումներ՝ աշխատանքային խմբի մոդերատորների և նշումներ կատարողների հետ:

Ձևավորվեցին առանձին աշխատանքային խմբեր հետևյալ թեմատիկ ուղղվածությամբ՝ յուրաքանչյուր թեմայի շուրջ քննարկումների արդյունքում Տեխնիկական առաջադրանքում եզրահանգումների հանրագումարի արդյունքում ձևավորելու համապատասխան դրույթ.

1. Տարաբնակեցման համակարգ, անդրազգային համատեքստ (քննարկումներ-եզրակացություններ),
2. Տրանսպորտ և ինժեներական ենթակառուցվածք (քննարկումներ-եզրակացություններ),
3. Տարածական պլանավորման և քաղաքաշինական օրենսդրություն, ինստիտուցիոնալ ասպեկտ և քաղաքականություն (քննարկումներ-եզրակացություններ),
4. Տնտեսական զարգացում (քննարկումներ-եզրակացություններ),
5. Սոցիալական և մշակութային զարգացում և բնակարանաշինություն (քննարկումներ-եզրակացություններ),
6. Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության կառավարում (քննարկումներ-եզրակացություններ):

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Յուրաքանչյուր ոլորտային ուղղվածության աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում պատրաստվեցին եզրակացություններ և առաջարկություններ:

Բոլոր մասնակիցներին ինչպես նաև ՍՈՒԴԱ-ին ներկայացվեց յուրաքանչյուր աշխատանքային խմբի հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

Ավարտական փաստաթղթի մշակման արդյունքում տեղի ունեցավ նաև «եզրակացությունների և առաջարկությունների» շնորհանդես:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառումն անցավ արդյունավետ և կառուցողական մթնոլորտում՝ ստեղծելով նախադրյալներ և հնարավորություն, ինչպես Տարածական և քաղաքաշինական զարգացման գործակալություն (SUDA, այսուհետ՝ «ՍՈՒԴԱ») (Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն) հետ համագործակցություն և փորձի փոխանակում ապահովելու, այնպես էլ վերջինիս կողմից ներգրավված միջազգային փորձագետների կատարած աշխատանքի արդյունքներին ծանոթանալու առումով: Արդեն իսկ ձեռք բերված հաջողված փորձն էլ կնպաստի Հայաստանի Հանրապետության տարածական պլանավորման գլխավոր փաստաթղթի մշակման տեղայնացմանը:

9. Գործուղվող՝ Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

10. Ստորագրությունը, ամսաթիվը

ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

30.04.2023 թ.